ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆ ԾՐԱԳԻՐԸ

03.06.2016 21:12

Հունիսի 3-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել «Հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագրի պաշտոնական մեկնարկը: Ծրագիրն իրականացվել է ABA ROLI հայաստանյան ներկայացուցչության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Այն ամբողջական տեղեկատվական բազա է, որը հնարավորություն է ընձեռում կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում գործող Հանրային պաշտպանի գրասենյակների փաստաթղթաշրջանառությունը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը բացման խոսքում շնորհավորել է ներկաներին «Հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագրի մեկնարկի կապակցությամբ: Անդրադառնալով ծրագրի ընձեռած հնարավորություններին՝ Պալատի նախագահը նշել է, որ դրա գործարկմամբ հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը զգալիորեն կթեթևանա: «Ծրագիրն ունի գործունեության ընթացքում կիրառված փաստաթղթերի արխիվացման և հաշվետվությունների ավտոմատ գեներացման համակարգ: Հանրային պաշտպանները հնարավորություն կստանան ցանկացած պահի և ցանկացած վայրից կատարել իրենց աշխատանքային գործառույթները, ստանալ հանձնարարականներ, իսկ ՀՊԳ ղեկավարին հնարավորություն կտա արդյունավետ կերպով բաշխել գործերը, իրականացնել հսկողություն, վարել ընթացիկ և ավարտված գործերի վիճակագրություն և այլ գործառույթներ»,-նշել է նա:

Բնական համարելով համակարգով աշխատելու սկզբնական վախերն ու անհանգստությունները՝ Արա Ջոհրաբյանը զուգահեռներ է անցկացրել Փաստաբանների պալատում ներդրված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի հետ՝ նշելով, որ աշխատակազմը արագ է յուրացրել կիրառման սկզբունքները: Պալատի նախագահը շնորհակալություն է հայտնել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարությանը ծրագրի կյանքի կոչման հարցում ցուցաբերած հետևողական աշխատանքի համար: Նա շնորհակալություն է հայտնել նաև ABA ROLI հայաստանյան ներկայացուցչությանը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակին ծրագրի ներդրման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Միջոցառմանը բացման և ողջույնի խոսքերով հանդես են եկել ABA ROLI հայաստանյան ներկայացուցչության փոխտնօրեն Հասմիկ Հակոբյանը և ԱՄՆ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի ղեկավար Ջեկ Անդերսոնը:

Անդրադառնալով ծրագրի կիրարկմանը՝ Հասմիկ Հակոբյանը նշել է, որ իրենց կազմակերպության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրային պաշտպանների աշխատանքում մեծ ջանքեր և ժամանակ են պահանջել փաստաթղթաշրջանառությանն առնչվող խնդիրները: Նա նշել է, որ Հայկական Ծրագրերի ստեղծած այս գործիքն առավել կհեշտանացնի հանրային պաշտպանների աշխատանքը՝ նպաստելով ծանրաբեռնվածության թեթևացմանն ու աշխատանքի թափանցիկությանը:

Ջեկ Անդերսոնը, նույնպես ողջունել է ծրագիրը՝ նշելով Միացյալ Նահանգների շահագրգռվածությունը մեր երկրի արդարադատության համակարգի տեխնիկական կատարելագործմանն ուղղված ծրագրերում:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանը շնորհակալություն է հայտնել միջազգային գործընկերներին ծրագրի իրականացման համար: Նա նշել է, որ ծրագրով ներդրված մոդուլների արդյունավետ կիրառման արդյունքում հնարավոր կլինի բարձրացնել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակը: Նա ընդգծել է, որ ծրագիրն իր տեսակով միակն է ամբողջ տարածաշրջանում և այս իմաստով դրա կատարելագործման և զարգացման համար ակնկալում է շարունակական համագործակցություն:

Ելույթներին հաջորդել է «Հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագրի պաշտոնական ներկայացումը, որը վարել է ՀՊԳ ղեկավարի տեղակալ Վարսեր Կարապետյանը: Ներկայացնելով ծրագրի ընձեռած հնարավորությունները և կիրառման հիմնական սկզբունքները՝

Վարսեր Կարապետյանը պատասխանել է նաև միջոցառման մասնակիցների հարցերին:

Տեղեկանք

«Հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագիրը նախատեսված է հեշտացնելու, կենտրոնացնելու և առավելագույնս արդյունավետ դարձնելու ՀՊԳ-ի գործունեությունը: Այն իրենից ներկայացնում է ՀՊԳ-ի էլեկտրոնային կառավարման համակարգ, որն ունի ՀՊԳ գործունեության ընթացքում կիրառված փաստաթղթերի արխիվացման և հաշվետվությունների ավտոմատ գեներացման համակարգ:

Ծրագիրը հանրային պաշտպաններին հնարավորություն Է տալիս, չգտնվելով աշխատավայրում և նույնիսկ քաղաքում, կատարել իրենց աշխատանքային գործառույթները՝ հանձնարարականներ ստանալ:

Այն ամբողջական տեղեկատվական բազա է, որը թարմացվում է յուրաքանչյուր պահի:

Ծրագրով ակնկալվում է.տնտեսել հանրային պաշտպանների ժամանակը և թեթևացնել նրանց ծանրաբեռնվածությունը,

հանրային պաշտպանի գրասենյակում ստեղծել միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգ, որը կհեշտացնի՝

հանրային պաշտպանի գրասենյակի կառավարումը, փաստաթղթերի կազմումը, տեղեկատվության որոնումը և առցանց օգտագործումը:

Էլեկտրոնային հանրային պաշտպանի գրասենյակն ունի հետևյալ հնարավորությունները՝

- Ø հանրային պաշտպանի գործունեության վիճակագրության վարում.
- Ø հանրային պաշտպանի կողմից տրամադրվող հաշվետվության ավտոմատացում.
- Ø հանրային պաշտպանների միջև, հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև փաստաբանների պալատի միջև տեղեկատվության ավտոմատ փոխանակման ապահովում.
- Ø վստահորդների տվյալների շտեմարանների վարում.
- Ø տիպային փաստաթղթերի գեներացում.
  յուրաքանչյուր գործով (խորհրդատվություն, փաստաթղթի կազմում, ներկայացուցչություն, պաշտպանություն և այլն)
- Ø առանձին էլ. գրասենյակի վարման հնարավորություն.
- Ø դատական նիստերի կամ դատավարական այլ գործողությունների վերաբերյալ օրացույցի վարում և դրանց անցկացման ժամանակի և տեղի վերաբերյալ համապատասխան հիշեցում.
- Ø էլեկտրոնային արխիվի վարում.
- Ø համակարգում անհրաժեշտ չափանիշներով տեղեկատվության որոնումների իրականացում:

«Հանրային պաշտպան» էլեկտրոնային համակարգի վեբ ինտերֆեյս առավել մատչելի մուտք գործելու և ծրագրից օգտվելու համար մշակվել են նաև համապատասխան ծրագրեր IOS և Android համակարգերում գործարկելու համար:

ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՍՊԱՍՈՒՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA


ՀՀ ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՍՊԱՍՈՒՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ասմիկ Հակոբյան
Զեկ Անդ

Դավիթ Մելքոնյան
Արթուր Հովհաննիսյան



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })